Նոտարական ակտի կոդ: 737-20210809-2-5297937
Նոտարական ակտի գաղտնագիր: DMY1ER

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Քաղաք Մեղրի, Սյունիքի մարզ, Հայաստանի Հանրապետություն
Երկու հազար քսանմեկ թվականի օգոստոսի իններին

<<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկը, իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 01Բ1083791 տրված 08.11.2016 թվականին ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ, ՀՎՀՀ՝ 09425378, հասցե՝ համայնք Մեղրի, Զորավար Անդրանիկի 2, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արարատ Թումանյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս **ՀԱՅԿՈՒՇ ԼԵՎԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ**, ծնված՝ 01/01/1973թ-ին, ՀԾՀ՝ 5101730367, նույնականացման քարտ՝ 000497529, տրված՝ 045-ի կողմից, 24/01/2013թ-ին, հաշվառված՝ ՍՅՈՒՆԻՔ, ՄԵՂՐԻ, ԱԼԿԱՆՔ, 1 Փ., 2 Տ, այսուհետև՝ <<Վաճառող>>, և

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս լիազորված անձ նշված կոմիտեի գործերի կառավարման վարչության շինարարական ծրագրերի համակարգման բաժնի ճարտարագետ-շինարար **ՏԻԳՐԱՆ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ**, ծնված՝ 08/12/1990թ-ին, ՀԾՀ՝ 1812900740, նույնականացման քարտ՝ 011578879, տրված՝ 005-ի կողմից, 03/06/2021թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, ՆԱՆՍԵՆԻ 1 ՆՐԲ., 2 Շ, 47ԲՆ, այսուհետև՝ <<Գնորդ>>, Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 03 օգոստոսի 2021 թվականի թիվ 61-Ա որոշման, նշված համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 05 օգոստոսի 2021 թվականի թիվ 307-Ա որոշման հիման վրա, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում հետևյալ անշարժ գույքը՝ մարզ Սյունիք, համայնք Մեղրի, գյուղ Կարճևան Մայրուղի փողոց 5 /հինգ/ թիվ 6 /վեց/ ջրհան կայան հասցեում գտնվող անշարժ գույքը, բաղկացած 37,3 /երեսունյոթ ամբողջ երեք/ քառակուսի մետր ընդհանուր մակերեսից, շինության ծածկագիր՝ 09-051-0434-0020-001, որը տեղակայված է 0,045 /զրո ամբողջ զրո քառասունհինգ/ հեկտար հողամասի վրա, հողամասի ծածկագիր՝ 09-051-0434-0020, ջրհան կայանի արտաքին մակերեսը կազմում է 56,05 /հիսունվեց ամբողջ զրո հինգ/ քառակուսի մետր (այսուհետև՝ <<ՕԲՅԵԿՏ>>):
1.2 <<ՕԲՅԵԿՏԸ>> սեփականության իրավունքով պատկանում է վաճառողին, ինչը հավաստվում է 22 դեկտեմբերի 2020 թվականին Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրված թիվ 22122020-09-0012 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով:
1.3 Պայմանագրի կնքելու պահին վերը նշված անշարժ գույքը գրավի, արգելանքի, կալանքի տակ չի գտնվում և վարձակալության կամ այլ օգտագործման հանձնված չէ, համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի Սյունիքի մարզային ստորաբաժանման կողմից 06.08.2021 թվականին տրված թիվ ՍՏ-06082021-09-0371 միասնական տեղեկանքի:
Նշված միասնական տեղեկանքի լրացուցիչ նշումներ և տեղեկություններ բաժնում նշված է. ԿԿԱՅԱԿԱՆ 22122020-09-0012: Ջրհան կայանի արտաքին մակերեսը կազմում է 56,05 /հիսունվեց ամբողջ զրո հինգ/ քառակուսի մետր: Գույքի նկատմամբ որևէ հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցումը կկատարվի հողամասը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում ընդգրկված լինելու կամ չլինելու վերաբերյալ համապատասխան տեղեկանք ներկայացնելու դեպքում:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն իրավունք ունի, եթե՝
2.1.1 Գնորդը ժամանակին չի վճարել սույն պայմանագրի համապատասխան հանձնված օբյեկտի համար՝ պահանջել վճարել նաև տոկոսներ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան:
2.1.2 Գնորդը սույն պայմանագրի խախտմամբ հրաժարվում է օբյեկտն ընդունելուց և դրա

համար վճարելուց՝ իր ընտրությամբ պահանջել վճարելու օբյեկտի համար կամ հրաժարվելու պայմանագիրը կատարվելուց:
2.2 Վաճառողը պարտավոր է՝
2.2.1 Օբյեկտը հանձնելու հետ միաժամանակ գնորդին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերվող փաստաթղթերը:
2.2. Օբյեկտը հանձնել Գնորդին երկու հազար քսանմեկ թվականի օգոստոսի տասին:
2.3 Գնորդն իրավունք ունի՝
2.3.1 Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված օբյեկտը:
2.3.2 Օբյեկտի պատկանելիքները և փաստաթղթերը սույն պայմանագրով սահմանված ժամկետուն վաճառողի կողմից չհանձնելու դեպքում հրաժարվել օբյեկտից:
2.3.3 Եթե վաճառողը գնորդին հանձնել է պայմանագրի առաջին կետին չհամապատասխանող օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան օբյեկտ կամ հրաժարվել հանձնված օբյեկտից կամ դրա համար վճարելուց, իսկ եթե դրա համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:
2.4 Գնորդը պարտավոր է՝
2.4.1 Օբյեկտի նկատմամբ իրավունքը գրանցել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում /երեսուն աշխատանքային օրվա ընթացքում/:
2.4.2 Վճարել օբյեկտի արժեքը սույն պայմանագրով նախատեսված կարգով ժամկետներում և գումարի չափով, վճարել պայմանագիրը կնքելու և ձևակերպելու հետ կապված բոլոր ծախսեր:

3. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1 <<ՕԲՅԵԿՏ>>-ի վաճառքի գինը կազմում է 1.823.000 /մեկ միլիոն ութ հարյուր քսաներեք հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, որը գնորդը ըստ վերը նշված համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից հաստատված վճարման ժամանակացույցի պարտավորվում է վճարել մինչև երկու հազար քսանմեկ թվականի սեպտեմբերի մեկը:

4.Սեփականության իրավունքի փոխանցումը

4.1 <<ՕԲՅԵԿՏ>>-ի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է լիազոր պետական մարմնում այդ իրավունքի գրանցման պահից:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պարտավորություններից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխել:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճի լուծումը հանձնվում է ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:
7.2 Սույն պայմանագիրը կնքված և ստորագրված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ, իսկ մեկ օրինակը մնում է նոտարական տարածքի գործերում: Պայմանագրի օրինակների մեջ հակասություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ գտնվող օրինակին:
7.3 Կողմերը պայմանագրի բովանդակությանը ծանոթացան իմ ներկայությամբ և հավաստիացնում են, որ պայմանագիրը ստորագրում են սթափ մտքով, առանց մոլորության,

բռնության կամ սպառնալիքի ազդեցության, այն համապատասխանում է իրենց իրական մտադրություններին և բավարարում է նրանց պահանջները:

Վաճառող՝ .....

Սյունիքի մարզի Մեղրի քաղաքային համայնք,
Լիազորված անձ՝ **ՀԱՅԿՈՒՇ ԼԵՎԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

Գնորդ՝ .....

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե,
լիազորված անձ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ**

Երկու հազար քսանմեկ թվականի օգոստոսի իններին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ <<Սյունիքի մարզ>> նոտարական տարածքի նոտար՝ Նարեկ Պողոսյանիս կողմից: Կողմերն առուվաճառքի պայմանագիրը ստորագրեցին է իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները ստուգված են:
Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 563 հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքներն ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում /երեսուն աշխատանքային օրվա ընթացքում/:

Գրանցված է սեղանամատյանում՝ 960 ով:

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Նարեկ Վիլիկի Պողոսյան

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	բյուջետային ծախսերի տնտես. դասակ. հոդվածը	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՊԵԿ 2021թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում					
			Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	**Ընդամենը**
1.	5111	Բնակելի անշարժ գույքի գնման ծառայություններ /ՀՀ Սյունիքի մարզ, Կարճևան համայնք, Մայրուղի 10/	1,059,000	1,059,000	1,059,000	1,059,000	1,059,000	**1,059,000**
2.	5411	Հողերի գնման ծառայություններ/ՀՀ Սյունիքի մարզ, Կարճևան համայնք, Մայրուղի 10/	1,001,000	1,001,000	1,001,000	1,001,000	1,001,000	**1,001,000**
3.	5111	Բնակելի անշարժ գույքի գնման ծառայություններ /ՀՀ Սյունիքի մարզ, Կարճևան համայնք, Մայրուղի 2/	925,000	925,000	925,000	925,000	925,000	**925,000**
4.	5411	Հողերի գնման ծառայություններ/ՀՀ Սյունիքի մարզ, Կարճևան համայնք, Մայրուղի 2/	1,230,000	1,230,000	1,230,000	1,230,000	1,230,000	**1,230,000**
5.	5111	Բնակելի անշարժ գույքի գնման ծառայություններ /ՀՀ Սյունիքի մարզ, Կարճևան համայնք, Մայրուղի 5/	1,039,000	1,039,000	1,039,000	1,039,000	1,039,000	**1,039,000**

6.	5411	Հողերի գնման ծառայություններ/ՀՀ Սյունիքի մարզ, Կարճևան համայնք, Մայրուղի 5/	784,000	784,000	784,000	784,000	784,000	**784,000**
7.	5111	Բնակելի անշարժ գույքի գնման ծառայություններ /ՀՀ Սյունիքի մարզ, Կարճևան համայնք, Մայրուղի 3/	772,000	772,000	772,000	772,000	772,000	**772,000**
8.	5411	Հողերի գնման ծառայություններ/ՀՀ Սյունիքի մարզ, Կարճևան համայնք, Մայրուղի 3/	918,000	918,000	918,000	918,000	918,000	**918,000**
9.	5411	Հողերի գնման ծառայություններ/ՀՀ Սյունիքի մարզ, Կարճևան համայնք/	157,905	157,905	157,905	157,905	157,905	**157,905**

ԳՆՈՐԴ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034817
Լիազորված անձ

Տ. ՄԱԼԽԱՍՅԱՆ _____
/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմ
ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 2
ՀՎՀՀ 09425378
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900305081367
Լիազորված անձ

Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ _____
/ստորագրություն/

Կ.Տ.